# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.02.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/50**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2025-2022 գրությամբ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2022թ. թիվ ՊՆ/02/443-2022 գրության հիման վրա, 07.02.2022թ. թիվ 26/26-1/2025-2022 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/50 ընթացակարգի շրջանակներում 14.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.01.2022թ. թիվ ՊՆ/02/443-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի միջև 10.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-21-4/10-2 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/50 ընթացակարգի շրջանակներում 14.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի միջև 10.09.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/10-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակ | Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|
| | | | | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. |
| 1(12) | Հովացման համակարգի ռադիատոր | հատ | 3 | 3 |
| 2(27) | Միջադիրի հավաքական | հատ | 20 | 20 |
| 3(28) | Կարդանային լիսեռի խաչուկ | հատ | 11 | 11 |
| 4(32) | Շրջադարձի հոդակապ ձախ | հատ | 6 | 6 |
| 5(33) | Շրջադարձի հոդակապ աջ | հատ | 6 | 6 |
| 6(35) | Հովացուցիչ | հատ | 2 | 2 |
| 7(41) | Տուրբոմղիչ | հատ | 5 | 5 |
| 8(47) | Մեկնարկիչ | հատ | 10 | 10 |
| 9(49) | Վառելիքի բարձր ճնշման մղիչ | հատ | 2 | 2 |
| 10(60) | Ղեկի ուժեղարարի գլանի ծայրապնակ | հատ | 12 | 12 |
| 11(64) | Հովացման համակարգի ռադիատոր | հատ | 15 | 15 |

3. Պատվիրատուն Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին ուղղված 25.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի միջև 10.09.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-4/10-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր թվով 11 անվանատողերով նախատեսված ապրանքներ, որոնցից 1 անվանատողով նախատեսված ապրանքները՝ 2 հատ հովացուցիչ, չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2025-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2022թ. թիվ ՊՆ/02/443-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի միջև 10.09.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/10-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակ | Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|
| | | | | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. |
| 1(12) | Հովացման համակարգի ռադիատոր | հատ | 3 | 3 |
| 2(27) | Միջադիրի հավաքական | հատ | 20 | 20 |
| 3(28) | Կարդանային լիսեռի խաչուկ | հատ | 11 | 11 |
| 4(32) | Շրջադարձի հոդակապ ձախ | հատ | 6 | 6 |
| 5(33) | Շրջադարձի հոդակապ աջ | հատ | 6 | 6 |
| 6(35) | Հովացուցիչ | հատ | 2 | 2 |
| 7(41) | Տուրբոմղիչ | հատ | 5 | 5 |
| 8(47) | Մեկնարկիչ | հատ | 10 | 10 |
| 9(49) | Վառելիքի բարձր ճնշման մղիչ | հատ | 2 | 2 |
| 10(60) | Ղեկի ուժեղարարի գլանի ծայրապնակ | հատ | 12 | 12 |
| 11(64) | Հովացման համակարգի ռադիատոր | հատ | 15 | 15 |

Պատվիրատուն Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին ուղղված 25.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի միջև 10.09.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-4/10-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր թվով 11 անվանատողերով նախատեսված ապրանքներ, որոնցից 1 անվանատողով նախատեսված ապրանքները՝ 2 հատ հովացուցիչ, չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

***<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 10.09.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/10-2» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում,

ուստի առկա են Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2025-2022 գրությամբ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**